ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2018 թվականի հոկտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2018 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 43998.1 մլն դրամ՝ պլանավորված 43100.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 2.1 տոկոսով կամ 898.1 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 45.2 տոկոսով կամ 13691.6 մլն դրամով, որից 10441.4 մլն դրամ գումարը պայմանավորված է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի կողմից վճարված հարկային եկամուտների աճով:

Հոկտեմբեր ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 4061.4 մլն դրամ՝ պլանավորված 4000.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 1.5 տոկոսով կամ 61.4 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 116 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 6 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 53 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 89.1 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 24 ստուգում՝ 86.7 մլն դրամ գումարով:

«Հարկային համակարգի բարեփոխումների հայեցակարգի» շրջանակում իրականացված հսկողական միջոցառումների արդյունքում արձանագրվել են վարձու աշխատողների չձևակերպման և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման 9-ական, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման 4, ձեռնարկատիրական գործունեության առարկաների չգրանցման և ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման 1-ական դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 107 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 89-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 7-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման, 4-ը՝

հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության և 7 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ավարտվել է 12 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 32.3 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 102 վարչական գործով սահմանվել է շուրջ 1.6 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 9452 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 8219:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 52 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 161 վարձու աշխատողի՝ 29.0 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 64 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Ֆինանսների նախարարի կողմից հաստատվել են «Հարկային ծառայողների ատեստավորման մասին» հրամանը, «Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմում հարկային ծառայության բարձրագույն, գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող ծառայողների իրավունքների, պարտականությունների, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման, դասային (հատուկ) կոչման մասին հարկային ծառայության պաշտոնների» նկարագրերը, փոփոխություններ կատարվել մի շարք հանձնաժողովների և աշխատանքային խմբերի անհատական կազմերում:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը և տրվել առաջարկություններ:

Հոկտեմբերի 26-ին ԱՀ ֆինանսների նախարարության նախաձեռնությամբ քննարկումներ են կազմակերպվել աշխատանքային այցով Արցախի Հանրապետություն ժամանած ՀՀ կենտրոնական բանկի մասնագետների խմբի հետ Արցախի Հանրապետությունում կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման,

բնակարանաշինության և հիպոտեկային վարկավորման ծրագրերի բարելավման ու ֆինանսական ոլորտին առնչվող այլ հարցերի շուրջ:

Հաշվետու ամսում նախարարության երկու աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին, իսկ մեկ աշխատակից ընդգրկվել է Եվրասիական շաբաթ միջազգային ֆորումի շրջանակներում կազմակերպված «Հարկային քաղաքականություն և արտաքին տնտեսական գործարքներին արժութային օժանդակություն» թեմայով դասընթացին:

Հաշվետու ամսում ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30.1-ին հոդվածով սահմանված կարգով կայքում հրապարակվել են առաջին 300 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերը:

Պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներին է ներկայացվել հարկային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար կազմակերպվելիք բաց և փակ մրցույթների վերաբերյալ հայտարարությունը:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 239, ելքագրվել՝ 99 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 8 գրություն, որից 5-ը՝ էլեկտրոնային եղանակով:

ՀՎՄՀՎԻԲ պետ **Ա. Մուսայելյան**